

զիմադրող աներևոյթ ոխերմը, քանզի ճակատ-
 ների վերայ իրրեւ անողորելի ճակատագիր կաշ-
 կանգնալ տգիտութեան կապերը և ոտն առ ոտն
 անգանդաղ քայլափոխել զէպի ուսումնասիրու-
 թեան և ազգային յատաշղիմութեան ասպարէզը:

ՍԱՐԳԻՍ Տ. ՄԵԼՔԻՍԵՅԷԿԵԱՆ ԲԱՅՆԵԳՈՒԹՅԻ:

Յ5Ն Մայիսի 1876 -ի:

յԱՂԷՒՈՒՄԻՆՆԵՐԱՅՈՒՄԻ:

ՍՈՒՐԷԱՆԳԱԿԲ ԲԵՒՉԱՆԳԵԱՆ:

ՊԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԱՐՉԱՆԱԳԻՐ

Ի ԼԵԱՌՆ ԶԻԹԵՆԵԱՅ

Քանի մի տարի առաջ հրատարակած ենք
 արդէն այն արձանագրութիւններն, զորս Երու-
 սաղէմի Ռուսաց Եկեղեցւոյ Գերապատիւ առաջ-
 նորդն գտաւ Ձիթնեաց լերան վերայ՝ նոր շի-
 նութիւններ անելու ժամանակ: Նոյն շէնքերն
 վերջացած են արդէն և ամեն արձանագրութիւնք
 անվճար և անխափա կը պահպանուին իրենց
 տեղն: յորոց վերայ երկյարկեան մի վայելչակերտ
 տուն բարձրացած է, որոյ մեծ միջնասենեկի յա-
 տակն կը կազմէ Արտաւանայ մօտ՝ Շուշանայ
 դամբանարանի մոզայիքէ ծաղկանկար արձանա-
 գրութիւնք:

Ռուսաց Գեր. առաջնորդն, որ անընդհատ
 կ'աշխատի՝ մի կողմէն իւր գնած ընդարձակ գետ-
 նի մէջ զանուած հնութիւններն՝ հետազոտել և
 միւս կողմէն նորանոր շինութիւններ կառուցանել,
 այս անգամ՝ գտած է նաև հետեւեալ Հայերէն
 մոզայիքէ արձանագրութիւնն, զոր արժան կը
 համարիմք հաղորդել մեր ընթերցողաց:

«ՎԱՍՆ ԱՂԱԹԻՅ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ
 ԹԵՒԱՅ ԱՐԱՍՈՒ ԵՒ ՄՈՒՐԿԱՆ» (*)

(*) Մ.Ա. — ԹԵՒԱՅ բառն անիմանալի կը մնայ մեզ համար.
 յատուկ անուն է արդեօք, թէ հասարակ անուն եւ նշանակութիւն
 ունի, կարող չենք այս մասին որչափի բան ասել:

(Գուցէ թեւանայ լինի, որ յատուկ անուն եւ ի բա-
 ւական տեղիս Հայաստանի գործածական է:

Ինչպէս Արարատայ անցեալ թուոյ
 մէջ խոստացած էինք, ահաւասիկ ի
 ներկայիս կհրատարակիմք Սրբուհի
 Մայրապետի կտակին պատճէնը:

ԿՏԱԿԱԳԻՐ

ՄՐՐՈՒՀԻՈՅ ՄԱՅՐԱՊԵՏԻ

ՆՃԵՆԵԱՆ ԳԱՓՈՅԵԱՆՑ

ՎԱՍՆ ՈՐՔԱՆՈՅԻ ԱՂԱԿԱՆՑ

ՀԱՍՏԱՏԵՍԷԼ Ի ԽԱՍԳԻՒՂ

ՅԵՆՈՒՆ

ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Ես՝ Սրբուհի մայրապետ Նշանեան Գալֆա-
 եանց, Հայկազն Լուսաւորչական ծնեալ ի Քար-
 թալ գեղջ մերձ ի Պոստանդնուպօլիս 1822, ա-
 ոողջ մտօք և յօժար կամօք գամ այսօր՝ ի նա-
 ւակատիս փառաւոր տօնի անզուգական ազգա-
 սիրաց Սրբոց Վարդանանց 1876 Փետրվար 12/24,
 կարգադրել և գրել զայս Ատակ որով Լուսա-
 ւորչական Սուրբ Աթոռոյն հարազատ սիրելի Աղ-
 գիս ընդհանրութեան նուիրեմ որք և անտէրունչ
 աղջիկ տղայոց պատասպարան և կրթարան Որբա-
 նոցն՝ զոր յաջողեցայ հիմնել ի Պոստանդնուպօլիս
 յամի 1866, և օժտել և բարեկարգել, անհուն
 ողորմութեամբն Աստուծոյ, և շնորհիւ Ա.հ.հախտ
 Ապո-իւլ - Ազիզ Պայսեր Օսմանեան, և սատարօք
 և նուիրօք բարեխրաց ազգայնոց և օտարաց:

Վ. ՏՈՒՆ ՈՐՐՈՅ

Այս տուն որոց՝ զոր Տաքէսեան բարեխրա-
 տակ գերզատանէն գնեցի ինն հարիւր յիսուն
 օսմանեան ոսկիի, Պոստանդնուպօլսոյ Խաֆէ-դ
 արուարձանի Աղաթ-Անէլա՝ թաղի Թի-բոյէ
 փողոցի մէջ վից թուահամարաւ կառուցեալ է
 փայտաշէն, ունելով երկոտասան սենեակ և սյահ,
 և մէկ քարաշէն բաղանիք և չրջապատեալ պար-
 տիզօք, ուր ազբիւր մի հաստատեալ ի Տաքէսեան
 Տաքէս ամիրայէ՝ անոյշ և հոսանուտ ջուր մա-
 տակարարէ մշտնջենապէս:

Սոյն տան և պարտէզին գետին՝ չորս հազար
 հինգ հարիւր օսմանեան կանգուն տարածութեամբ,
 Սուլթան Պէյազիտի վաճէն է որմէ անուած է

երկու կտոր կալուածագիր «էնէն», որոց օրինակներն ի հայ գրոշմեալ կը յարեմ կտակագրոյս:

Սոյն կալուածագրերն յայտ առնեն թէ Որբանոցն՝ Երամեան առաքինասէր Էպրու տիկնոջ անուան ֆէրուզ եղած արձանագրուած է: Սակայն կալուածագրերն իմ քով են, և աւանդապահ Տիկինն վաւերական մուրհակ տուած է՝ Որբանոցն իր ստացուածք չը լինելուն ի հաստատութիւն, ինչպէս կը ցուցնէ օրինակը որ ի վերջ կտակագրոյս:

Իսկ անոյչ և մշտահոս ջուրը՝ որ Խասգիւղ Կէլկէլեանց մեծ տան առջևի անշէն գետինն ներքէն բղխելով, ստորերկրեայ ճանքով կուգայ մինչև յՈրբանոց, սեպհականութիւն է Որբանոցիս. սակայն իր երկու կտոր «էնէն»ներն՝ որ ջրաբաշխ պաշտօնէութեան կողմէն առնուած են՝ տան նախկին տէր Տարէսեան Գանիէլ աղային անուան արձանագրեալ կը մնան և սա ինքնագիր վաւերական մուրհակաւ հաստատած է նոյն ջուրին Որբանոցի սեպհականութիւն լինելն. և այս «էնէն»ներուն և մուրհակի օրինակներն կտակիս կը ցելով հաղորդեմ Ազգիս:

2. ԱՄԱՐԱՆՈՅ ՈՐԲՈՅ

Այս ամարանոց միայսրկ շէնք մ է քարակիր, հինգ սենեակով և սրահով. զոր քարթալ գեղի Սուրբ Եօզ փողոցի մէջ կառուցանել յաջողեցայ, և որը աղջկանց սեպհականելով, յանուն սուրբ կուսին Մարիամու, Պաշտպանի Որբանոցիս, Մարիամ «էնէն» Եօզի անուան ֆէրուզ ընել տուի: Տես ասոր ալ երկու կտոր «էնէն»ներուն օրինակներն ի վերջ կտակագրոյս:

Սոյն ամարանոցի գետինը՝ նուէր է աղնուաշուք Ուսուլ Տիկնոջ Փիշմիշեան, և վաճառական Խաչիկ աղայի Ազգարոսեան:

Իսկ շինութեանը մասնաւոր նպաստ և մեծ ինամք բրած է ճարտարապետ Նիկողոս Էֆէնտի Յովասափեան:

3. ԿԱՆՈՒՄԱՐ ՈՐԲՈՅ

Որբոց կալուածներն առ այժմ երկու են: Մէկն է կրպակ մը (մաղաղա), Ապարթիս Մօսէնի փողոցին մէջ, թիւ մէկ, զոր հանգանակու-

թեամբ ազգայնոց յաջողեցայ գնել երեք հարիւր օսմանեան ոսկիի և Որբանոցիս կալուած սեպհականեցի: Սորա հետ և Էօզի Բախամաճեան Արսեմաշուք Յարութիւն Էֆէնտի անուան արձանագրեալ են. և երկու կտոր «էնէն»ներուն օրինակներն և աւանդապահի մուրհակի օրինակն կտակագրոյս վերջը կը հրատարակեմ: Սոյն կրպակ առ այժմ՝ երեք հազար զուրուշ տարեկան հասոյթ կը բերէ Որբանոցիս:

Երկրորդն է՝ կրպակ մը (խանութ) քարաշէն Պոստանդնուպոլիս Ապիտէ խանի մէջ, վախտուն և հինգ թուահամարաւ, զոր Բախամաճեան Մարիկ և Աննիկ տիկնայք նուիրած են Որբանոցիս. և թէպէտ կալուածոյս երեք կտոր «էնէն»ներն բարեպաշտուհի նուիրատուաց անուան ֆէրուզ եղած կը մնան, սակայն սրբա իրր աւանդապահ մուրհակ տուած են նոյն կրպակի Որբանոցիս սեպհականութիւն լինելուն. որոյ օրինակն ինչպէս նաև «էնէն»ներուն օրինակներն տես ի վերջ կտակագրոյս: Սոյն կրպակ առ այժմ հազար երեք հարիւր զուրուշ տարեկան հասոյթ կը բերէ Որբանոցիս:

4. ԳԱՆՁ ՈՐԲՈՅ

Որբանոցս ունի առ այժմ՝ Ա. Հարիւր Բօնօնի օսմանեան. նուէր Բարակէօղեան Երմոնիկ տիկնոջ. որ թէպէտ իր քով պահած է Բօնօնիներն, սակայն ամեն տարի Որբանոցիս կը վրձարէ տարեկան շահը:

Բ. Հարիւր Բօնօնի օսմանեան, նուէր Մարիամ տիկնոջ Եաղըճեան, որ ինձ յանձնած է Բօնօնիներն:

Գ. Մէկ Ըուսէլի երկաթուղոյ բաժնետոմս, թիւ՝ ինն հարիւր եօթանասուն և ութ հազար երեք հարիւր իննսուն և չորս:

Դ. Մէկ Պուրբէշ քաղաքի փոխառութեան տոմսակ, թիւ՝ տասներկու, կարգ՝ երկու հազար ինն հարիւր իննսուն և եօթն:

5. ԹՈՇԱԿ ՈՐԲՈՅ

Որբանոցս ունի օրական տասն և հինգ հօնահայ և եօթն կէս հօնա միս թոշակ, զոր իմ և

որոցս աղերսագրերն ընդունելով Ահափառ
Կայսրն Ապոս-Իւլ - Աղիզ շնորհաց մշտնջենապէս
1870 Մայիս 2ին, և զոր վայելեն որրուհիքս հա-
նապագոր: Տեն սոյն թողակի պաշտօնական վը-
կայգրին օրինակն ի վերջ կտակագրոյս:

6. ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆ ՈՐՐԱՆՈՑԻ

Յօդ. 1 — Որբանոցը՝ Սուրբ Էջմիածնի ամե-
նայն Հայոց Հայրապետութեան հովանաւորու-
թեանը տակ գտնուող Հայկազուն որբ և անտէ-
րունչ աղջիկ տղայոց Պատասպարան և Արթարան
հաստատուած է, և կը յանձնածի Որբասէր ըն-
կերուհեաց ձեռք, ընդ վերատեսչութեամբ Որ-
բանոցի Մօր:

Յօդ. 2. — Որբանոցի զոյից և հասից տէր են և
անոր խնամքը վայելելու իրաւունք ունին այն
որբերը միայն՝ որ անդ ընդունուած են և պատըս-
պարուած: Ասոնք կը կորուսնեն սոյն իրաւունքը՝
երբ Որբանոցէ կը զատուին՝ ամուսնութեամբ կամ
այլում՝ որդեգրութեամբ և կամ՝ այլուր պաշտօ-
նակալութեամբ:

Յօդ. 3 — Նոյնպէս Որբանոցի զոյից և հասից
տէր են որբերուն հետ՝ այն Որբասէր ընկերուհիք՝
որ զիրենք անոր յանձնաձանաց նուիրած են, և
ձրիաբար կաշխատին որբոց խնամարկութեան թէ՛
յՈրբանոցի անդ և թէ՛ Աւերատեսուչ մօր յանձ-
նարարութեամբ՝ անկէ զօրս տեղ: Ասոնք ալ
կը զրկուին սոյն իրաւունքէն երբ կարտաքսուին
և կամ կամովին կը զատուին՝ որբասիրաց ընկե-
րութենէն:

Յօդ. 4 — Որբասիրաց ընկերութիւնը կը բաղ-
կանայ Որբասէր ընկերուհիներէ, որ Քոյր կը կո-
չուին, և որոց զուտ է Որբանոցի Մայրը:

Յօդ. 5 — Որբասէր ընկեր և քոյր կընդու-
նուին այն ամեն օրիորդք և այրի տիկնայք՝ որ
յօժարամիտ ինքզինքնին կը նուիրեն որբոց ձրիա-
պէս խնամարկութեամբ և կուխտեն կատարեալ
հնազանդութիւն կարգաց և կանոնաց Որբանոցի:

Յօդ. 6 — Որբասէր ընկերուհի կընդունուին
նաև յՈրբանոցի պատասպարեալ որբերէն անոնք՝
որ հասակաւ քսան տարին լրացուցած և կը թու-
թիւննին յառաջ տարած ըլլալով, իրենց վար-
քով և բարքով արժանաւոր կը հանդիսանան

Որբասէր ընկերուհեաց կարգն անցնելու՝ առաջի
վերատեսուչ Մօր և իւր Խորհրդականաց: Ասոնք
այն վայրկեանէն որբոց զատն կեննեն և Քոյր ա-
նուը կառնուեն, և միևնոյն ուխտ կընեն և միև-
նոյն պաշտօն և պարտաւորութիւն կ'ստանանն՝
ինչ որ զրոքն ընդունուած Քոյրերը:

Յօդ. 7 — Որբասէր քոյրք ազատ են իրենց ուխ-
տը փոխել և ընկերութեան անդամակցութենէ
բաժնուիլ, երբ և կամին բաւական է որ գէթ
ամիս մը առաջ իրենց դիտաւորութիւնը զրով
յայտնեն Որբանոցի Մօր: Իսկ եթէ այս պայ-
մանէն զանց առնեն և զանխաբար կամ բացար-
ձակապէս ձգեն իրթան Որբանոցէն, այնպիսիք
արտաքսեալ կը համարուին Ընկերութենէն, և
այնպէս կը հրատարակուին վերատեսուչ Մօր
կողմէն:

Յօդ. 8 — Այն ընկերուհիք որ իրենց ուխտը
զրծելով անհնազանդութիւն կընեն կարգաց և
կանոնաց Որբանոցի, երկիցս և երկցս խրատուելէն
հտքը եթէ յուզուածին չի գան, ինչպէս նաև
անոնք որ անկարգութեամբ կը վարուին, Հաստա-
տութեան պատուոյն արատ կը բերեն և յետ յոր-
զորանաց չեն զգաստանար, Որբասիրաց ընկերու-
թենէն կարտաքսուին՝ Մօր և իւր Խորհրդակա-
նաց որոշմամբը:

Յօդ. 9 — Որբանոցի Մայրը զուտ է որբասի-
րաց ընկերութեան, Մայր որբոց և Աւերատեսուչ
Որբանոցի:

Յօդ. 10 — Որբանոցի Մօր պաշտօնը ցկեանս
կը տւէ, նաև եթէ հիւանդութեան կամ ծերու-
թեան պատճառաւ անկարող ըլլայ իր պաշտօնը
վարելու: Սոյնպիսի պարագայից մէջ ընկերուհեաց
Ընդհանուր Ժողովոյ առաջարկութեամբ և Պատ-
րիարքական ընտրութեամբ Տեղակալ մը կորոչուի
ընկերուհեաց մէջէն, և նա կը վարէ Մօր պաշ-
տօնը յանուն նորա և մինչև ցմահ նորին:

Յօդ. 11 — Սակայն եթէ Որբանոցի Մայրը ան-
հաւատարիմ գտնուի իր կոչման և ուխտին, և
վարքով կամ գործով բարոյապէս կամ նիւթա-
պէս վնաս պատճառէ Որբանոցի, ամբաստանու-
թեան ներքև կընկնի:

Ամբաստանութիւնը Որբանոցի խոստովանահօր
միջոցաւ առ Պատրիարք Առասանդնուպօլսոյ կուղ-

զուրի և անոր միջոցաւ կը քննուի, և եթէ ամբաստանեալն ինքզինք չ'ընայ արդարացունել, և միանգամ և երկիցս խրատուելէն ետքը՝ զարձեալ յուրդու թիւն չի գայ, պաշտօնէն կը ձգուի Պատրիարքի ձեռքը:

Յ:Գ. 12 — Արև է պատճառաւ Արքանոցի Մօր տեղը թափուր մնացած ժամանակ՝ Խորհրդական երեք ընկերուհիք անոր պաշտօնը առ ժամանակեայ ձեռք կառնուն, և յաջորդին ընտրութեան համար վաղվադակի Ընդհ. Ժողով կը կազմեն Արքասէր ընկերուհիներէն: Սոյն ժողովի գործադրութիւնը վաւերական համարուելու համար պէտք է անդ ներկայ գտնուին Արքասէր քօյրերուն մեծագոյն մասն, առ նուազն կէսէն մէկ աւելին: Արքանոցի խոստովանահայրը նախագահ կը բազմի սոյն գումարման, ուր նախ Արքանոցի Հիմնադրին կտակը հրապարակաւ կը կարդացուի և ապա իւրաքանչիւր ընկերուհի առանձինն քուէթղթի մը վերայ գաղտնապէս կը գրէ Արքանոցի Մօր պաշտօնին ըստ իւր խղճի ամենէն արժանաւոր ընկերուհւոյ անունը, և քուէն ծալելով կ'ձրգէ քուէտուփին մէջ՝ որ կանխաւ պարտաւ ըլլան հրապարակաւ ստուգուած և կնքուած մնայ անգ՝ առաջի նախագահ քահանայի Քուէտրիութիւնը լինուալէն ետքը քուէհամար կը ըլլայ յատենի ժողովոր և ցուցակի մը մէջ կարձանագրուին բոլոր Քուէ աւտող ընկերուհեաց անունները, քուէից առաւելութեան կարգաւ: Այս ցուցակը կատարազրն բոլոր ժողովականք և նախագահ քահանայն, ինչպէս նաև Քուէտրիութեան բոլոր գործածողութեանց ատենագրութիւնը, և նախագահ քահանայն զանոյք կը ներկայացունէ Պատանդու պօքոյ Պատրիարքին: Պատրիարքը յիշեալ ներկայացման ցուցակէն իւրաքանչիւր ընկերուհւոյ իր ընկերաց քով ունեցած վարկն և վստահութեան աստիճանն հասկնալով, և քուէ ստացող քօյրերուն ամեն մէկին արժանիքն առանձինն ստուգելով, վերջապէս երեք աւուր մէջ կընտրէ առաւելագոյն քուէ ստացողաց մէջէն ամենէն արժանաւորը, Մայր Արքոց և Վերաօնուէ Արքանոցի, և թղթով կը ծանուցանէ զընտրութիւն նորա որքասէր ընկերուհեաց և ընդհանուր Ազգին:

Յ:Գ. 13 — Արքանոցի նորընտիր Մայր իր պաշտօնն սկսելէն առաջ՝ յատենի ժողովոյ ընկերուհեաց հանդիսաւոր ուխտ կընէ հաւատարիմ մնալ իր կոչման, Մայր ճշմարիտ ըլլալ որոցոյ անոնց իրաւանց պահպանութեան պատկառ կալ, և Արքանոցի կանոնաց ճշդիւ գործադրութեան հսկելով իր վարտք և բարութք օրինակ բարի հանդիսանալ ամենուն:

Յ:Գ. 14 — Արքանոցի մօր պաշտօնն է Արքանոցի վերաօնուէութիւնը՝ նա կընդունի Արքասէր ընկերութեան անդամ ըլլալ փափաքող քօյրերը, և անոնց ամեն մէկուն պաշտօնն ու պարտաւորութիւնները կը սահմանէ:

Նա կընդունի յԱրքանոց պատասպարիլ ուղղորդները և անոնց խնամատարութեան և դաստիարակութեան համար պէտք եղած պաշտօնականները կընտրէ և վարձքերն ին կը սահմանէ:

Յ:Գ. 15 — Արքանոցի բոլոր հաստիք և նուէրք Մօր ձեռքը կը յանձնուին, և նա կը հրամայէ ամեն ծախուց համար պէտք եղած ելքը:

Յ:Գ. 16 — Մայրը կը հսկէ Արքասէր ընկերուհեաց իւրաքանչիւրում պաշտօնի ըստ օրինի կատարման, Պակասութեան մէջ գտնուողները կը խորատէ, և յետ երկիցս և երկցս յորիորանաց անուղղայ գտնուողները կարտաքսէ ընկերութենէն:

Յ:Գ. 17 — Մայրը խնամք կը տանի և կ'հսկէ պատասպարեալ որոցոյ դաստիարակութեան, և ուսմանց և ձեռագործական արուեստից մէջ յառաջագէմ՝ զարգացման հոգ կը տանի, և ամեն մէկուն ապագայն յարգարելով, ամուսնութեամբ կամ այլում՝ Արդիկութեամբ կամ պաշտօնականութեամբ և կամ Արքասէր ընկերուհեաց կարգըն անցունելով, որոցոյ դասը հետզհետէ թեթեւանալու, և նորեկ որոց տեղ պատրաստելու ջանք կընէ:

Յ:Գ. 18 — Մայրը իր պաշտօնն զիւրութեամբ կատարելու համար Արքասէր ընկերուհեաց մէջէն երեք անձինք կընտրէ իրեն խորհրդակից օգնական, և անոնց հետ մեկտեղ Արքանոցի Վարական խորհուրդ կազմելով՝ ամենայն ինչ խորհրդակցութեամբ կը տնօրնէ: Սոյն երեք ընկերուհիք Մօր խորհրդակցօգնականութիւն ընկէ պատմանաւոր պաշտօն կը վարեն, մէկը Մօր փոխա-

նորդութիւն ընկելով անոր բացակայութեան ժամանակ երկրորդը՝ գանձապետութիւն Արքանոցի և երրորդը՝ գրագրութիւն Արքանոցի վարչութեան: Ասոնց ամենուն պաշտօնը երկու տարի կը տևէ սակայն վերընտրելի են, և միշտ ազատ պաշտօնէ հրաժարելու:

Յօդ. 19 — Մայրը ամեն տարեգլուխ որքանոցի հաշիւները Աւարչական խորհրդով կարգադրելով թէ անցեալին հաշուեցոյցը, և թէ նոր տարւոյ ծախուց հաշուեկէտը կը պատրաստէ, և բացատրիչ տեղեկագրով մը հանգերձ կուղղէ առ Պատրիարք Առաքանդնուպօլսոյ:

Յօդ. 20 — Մայրը յիշեալ հաշուեկէտոյն վրայ Պատրիարքի կողմէն ընդունած հրամանին համեմատ Արքանոցի տարեկան ծախքը կը հոգայ Հաստատութեան հասից չափովը որբեր խնամելու պայմանաւ, բացէն պարտք ընելէ կզգոշանայ և որ աւուր Արքանոցի հասոյթն առատացնելու ամեն ջանք ի գործ կը դնէ:

Յօդ. 21 — Եթէ հարկը պահանջէ որ Արքանոցը տարուան մէջ հաշուեկէտոյն նախատեսութենէն վրիպած արտաքոյ կարգի ծախք մը ընել պարտաւորի, Մայրը Աւարչական խորհրդոյ որոշմամբ ունի իշխանութիւն նոյն ֆախքը տնօրինել, եթէ երկու հազար զրուշէն աւելի չէ, Իսկ սոյն գումարէն աւելի ծախուց համար Մայրը պարտաւոր է մասնաւոր տեղեկագրով հրաման խնդրել Պատրիարքէն:

Յօդ. 22 — Արքանոցի շէնքին և կալուածական ստացուածոց և ամենայն ընչից և կարասեաց մանրամասն ցուցակը ընդհանուր Տուժարի մը մէջ կարձանագրուի Սոյն տուժարը՝ հանդերձ կալուածական և պաշտօնական գրովք (սէնէթ, հէօձէթ, ֆէրման, և ըն.) արկեղ մը մէջ կը փակուի, և բանալին Մօր քով, բայց կղպանքի վերայ խորհրդականաց կնքով կը կնքուի:

Յօդ. 23 — Արքանոց պատասխարեալ որբուհիք Արքանոցի մէջ կը դաստիարակուին և կուսանին — Ա. Հայերէն ընթերցանութիւն, գիր և Քերականութիւն:

Բ. Քրիստոնէական վարդապետութիւն:

Գ. Պատմութիւն — Սրբազան Ազգային և Արտաքին:

Դ. Համարողութիւն — Թուարանութիւն և Երկրաչափական մանր գիտելիք:

Ե. Քեղագրութիւն, Գծագրութիւն և Նրկարչութեան վարժութիւն:

Զ. Աշխարհագրութիւն:

Է. Երգեցողութիւն — Եկեղեցական և Ազգային:

Ը. Չուագործական արուեստք:

Յօդ. 24 — Աերոյիշեալ ուսմանը և արուեստք անհրաժեշտ ուսանելիք են բոլոր որբոց, Իսկ զարգացելոց՝ օտար լեզու և դաշնակ ալ կրնայ դաստրուիլ, եթէ Արքանոցի հասքը բաւեն անոնց ծախքն ալ հոգայու:

Յօդ. 25 — Արքանոց վարժարանը պատասխարեալ որբոց յատուկ է գրաւն աշակերտ չընդունուիր ո՛չ գիշերօթիկ և ո՛չ ցերեկուանի համար:

Յօդ. 26 — Արբոց խնամատարութեան և դաստիարակութեան պէտք եղած բոլոր պաշտօնակալները՝ ինչպէս են Տնօն, Խոհարար, Լուսցարար, Սպասուհի, Առաւախքիչ, Գաստիարակ, Գաստու, և այլն, Արքատէր ընկերուհեաց մէջէն կրնտրուին: Եւ եթէ ասոնցմէ յարմար անձինք չը գտնուին, գրաւն ալ կրնան առնուիլ, բայց երբէք երիտասարդ մարդիկ չընտրուելու պայմանաւ, և կանայք նախագաս համարուելով միշտ արանց:

Ասոնք են աւասիկ տամնաժայ վաստակոցս արդիւնքը, զոր Տէր օրհնեց, և արժանի ըրաւ զիս այսօր նուիրել Լուսաւորչական Հայկազնեայց սիրելի Ազգիս ընդհանրութեան:

Խնդրեմ՝ Աստուծոյ շնորհել ինձ տակաւին վաստակել Արքանոցիս համար, որոյ յառաջադիմութեան նուիրած եմ կեանքս մինչև ցոյտին վարկեան: Եւ խնդրեմ՝ Ազգէս որ յետ իմ մահուան՝ Արքանոցիս գրութիւնն անփոփոխ պահելով, նախաձանդիր ըլլայ անոր օր քան զօր պայծառանալուն:

Մասնաւորապէս սոյն Ատակաւ կամիմ և խընդրեմ՝ որ՝

1. Արքանոցս կրբէք ուրիշ որ և է Ազգային հաստատութեան հետ չը միացուի այլ միշտ անկախ մնայ և ինքնուրոյն կառավարուի հաստատեալ կանոնաց համեմատ:

2. Որքանոցիս կալուածները, եկամուտները և չասոյթներն անկորուստ պահուիմն և օր աւուր զարգանալուն ամեն ջանք ի գործ դուրս եւ ամենայն ինչ յանուն Մարիամայ Յովակիմեան Պաշտպանի Որքանոցի պաշտօնապէս արձանագրել տարով, որքոց ապագայն ապահովելու մեծ խնամք տարուի:

3. Որքանոցիս Վարչութիւնը միշտ Որքասէր ընկերուհեաց ձեռքը մնայ. Մայր որքոց միշտ անոնց մէջէն ընտրուի: Սակայն Ազգն Տղոզ ըլլայ Որքանոցի կանոնաւորապէս խնամարկութեան և նախանձախնդիր՝ կանոնաց ճշդիւ գործադրութեան որոյ ուսումնական և տնտեսական տրամադրութիւնք միայն ժամանակին ներդաշնակութեամբ կատարելագործուին, Որքասիրոց ընկերութեան և Առատանդնուպօղոյ Պատրիարքին համահաճութեամբ: սակայն հիմունքն անխախտ մնան և սկզբունքն անփոփոխ:

Հաճեցի Տէր օրհնել Հաստատութեանս վաստակաւորները մինչև ցվախճան ժամանակի և արդելով այն ամեն դիտաւորութեանց կատարումն՝ որ չարակամութեան կամ անխոհեմութեան արդիւնք ըլլալով, կրնան հիմն ի վեր տապալել խղճալի որքոց միակ պատասպարան և կրթութարան Որքանոցս, զոր Աստուածային կամաց, Աստուածածնի պաշտպանութեան և Ազգիս Տրակողութեան յանձնելով կատարագրեմ:

ՍՐԲՈՒՆԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԵՇԱՆ ԳԱԼՃԱՆԱՆՏ

12/24 Փետրեւր 1876

Եւ օր վարդաւանց Զօրախարաց:

Ստորագրեալքս յայտ առնեմք թէ այս ստորագրութիւնը Սրբուհի Մայրապետի նըշանեան Գալֆասեանց ձեռագիրն է, զոր յատենի թաղական Խորհրդոյս ինքնայօժար դրաւ կտակագրոյս ներքևը, գիտելով քաջ սորին պարունակութիւնը, և բացարձակապէս յայտնելով նաև բանիւ բերանոյ թէ 1866 թուին թաղիս մէջ հիմնած Որքանոցը, զոր տամնամայ աշխատութեամբ յաջողեցաւ օժտել և բարեկարգել, յօժարութեամբ սրտի կը նուիրէ Առատաորչական

Հայկազեան Ազգիս ընդհանրութեան, մնալով ինքն Մայր Որքոց և վերաստուչ Որքանոցի մինչև ցմահ:

Ի քի՛տոյ Թագա՛ւն Խորհրդոյ

Վասն Ասեմադարի	Ասեմապետ
Յ. ՍԻՆԿԻՒՏԵԱՆ	Ս. ԱՐԱՊԵՏ

12 փետր. 1876 (12/24 Թ. խ. Խորհրդոյ)

Թ. խ. Խորհրդոյ
 1 Խորհրդ. Կ. Պօլսոյ

Որքանոցիմ խոստովանակայր
 ԳԵՈՐԳ ԳԱԼՃԱՆԱՆՏ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Ազգային Վարչութեան Տնտեսական Խորհուրդը ներկայ Ատակադիրս քննելով՝ օրինաւոր կը դատէ և կը վաւերացնէ զայն:

Ի քի՛տոյ Տնտէ. Խորհրդոյ

Ասեմադարի	Ասեմապետ
Մ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ	Գ. ՍԵԼՄԻՒՏԵԱՆ

10 Մարտի 1876

1 Պետրեւրեւր 1876

Կ. Պօլսոյ

Ներկայ Ատակադիրս ըստ վկայութեան Ազգային Տնտեսական Խորհրդոյ օրինաւոր դատելով կ'հաստատեմք, և կը վաւերացնեմք պաշտօնական կնիքք և ստորագրութիւնք որ ի սմին, և ասոր երեք օրինակներէն մին Պիւանատան Պատրիարքարանի, երկրորդը Խասպուղի Թաղական Խորհրդոյ՝ և երրորդ օրինակն կտակարար Սրբուհի Մայրապետի յանձնելու պայմանաւ, որոյ ի հաստատութիւն կատարագրեմք և կը վաւերացնեմ կնքով Ազգային Պատրիարքարանիս յանձնել գործադրութիւն:

Պ. Կ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՍ

18 Մարտ 1876

1 Պետրեւրեւր 1876

Կ. Պօլսոյ:

Շնորհակալութեամբ ընկալեալ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ ի նիստ ԻԳ. ի 26 Մարտ 1876:

Ասեմադարի	Ասեմապետ
Մայր Գե. Անի	Մայր Գե. Անի

Կ. Ս. ԱԼՃԱՆԱՆԱՆՏ Ս. ԱՍԻԱՆԵԱՆ